

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Սերբ Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալին

Հունվարի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Նիշի եպիսկոպոս Իրինեոսին՝ Պեչսկի արքեպիսկոպոս, Բելգրադի և Կարլովցի միտրոպոլիտ, Սերբ Ուղղափառ Եկեղեցու պատրիարք ընտրվելու և գահակալության առիթով:

«Սուրբ Հոգու ներշնչմամբ և ի նշան Սերբ Ուղղափառ Եկեղեցուն Ձեր օրինակելի հոգևոր առաջնորդության, Դուք ընտրվեցիք որպես Սերբիայի Եկեղեցու առաջին սպասավոր և կոչվեցիք առաջնորդելու մի ժողովրդի, որի պատմությունը հատկանշված է անսասան հավատարմությամբ առ Քրիստոս և բազում մարտիրոսներով», - ասվում է Հայրապետական շնորհավորագրի մեջ:

Նորին Սրբությունը վստահություն է հայտնել, որ միայն ջանքերի մեկտեղումով հնարավոր կլինի հաղթահարել ժողովուրդների առջև ծառայած դժվարությունները և մարտահրավերները: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևորել է նաև միջեկեղեցական կապերի սերտացումը և միջկրոնական երկխոսության առավել խթանումը:

###